*Լեֆելդի և ուրիշները)։ Պէտք է աշխատել միշտ ձեռք բերել իսկական սերզատիչը և ոչ ռուսական ընդօրինակածը։*

Սերզատիչների տուած օգուտը. *Միջին հաշուով սերզատիչով ստացուած սերը 10$^0/_0$ աւելի կարագ է տալիս, քան Շուարցի ամանով ստացուածը և 20$^0/_0$ աւելի գիւղական հասարակ եղանակով ամանների մէջ փռելուց։ 250 ռ. արժողութիւն ունեցող սերզատիչը մի տարուայ ընթացքում կարող է մինչև 10,000, ամենապակասը 8000 վեդրօ կաթից սեր զատել։ Այդչափ կաթից կարելի է ստանալ հին եղանակով, այսինքն ամանների մէջ փռելով՝ 222 փ., Շուարցի ամանով՝ 240 փ., իսկ սերզատիչով 244 փ. կարագ։ Սրանից հետևում է, որ սերզատիչը ամանների մէջ փռելուց 44 փ., իսկ Շուարցի եղանակով սեր զատելուց 24 փ. աւելի կարագ է տալիս։ Կարագի փութը 12 ռուբ. հաշուելով՝ առաջին դէպքում 528 ռ., իսկ վերջին դէպքում 288 ռ. աւելի եկամուտ է ստացւում։*

*Նշանակում է, եթէ մէկը թողնի ամանների մէջ կաթ փռելը ու այնտեղից սեր զատելը և այդ նպատակով գործ դնէ սերզատիչ, կէս տարուայ ընթացքում այդ մեքենայի գինը կհանէ. իսկ եթէ Շուարցի ամանով սեր զատելու փոխարէնը գործ դրուի սերզատիչ, վերջինիս գինը մօտ մի տարում կարող է դուրս բերել։ Աւելի պարզենք մեր խօսքը. սերզատիչով հինգ կովի կաթից այնքան կարագ կստացուի, որքան պէտք է ստացուէր հին եղանակով վեց կովից, որից հետևում է, որ սերզատիչ գնող կովատէրը մի վեցերորդ կով եւս գնած կլինի, որը թէպէտ և իսկապէս գոյութիւն չի ունենայ, բայց կաթ կստացուի։ Բացի դրանից մի սերզատիչով կարելի է մի ագարակի գործ տեսնել և մի կին, նոյն իսկ մի տղայ կարող է դարձնել ամբողջ մեքենան։*

(Շարունակելի).

Գ. Ղ.

## ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

***Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ հետևեալ գրքերը.***

1. Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը.—*Մասն առաջին. Աշխատասիրութիւն Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի. Ս. Պետերբուրգ, Պուշկինեան տպարան. գինն է* 1 *ռբ.* 50 *կոպ։*

2. Աստուածային հրահանգ հանրապարտուց. (ս. գրքից թարգմանուած). Աշխատասիրեց Մակար եպիս. Բարխուդարեան. Թիֆլիզ, Արագատիպ Մարտիրոսեանի. գինն է 80 կոպ:

3. Պըլը-Պուղի.—Նոյն հեղինակի. Վաղարշապատ. Տպարան Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի. գինն է 45 կոպ:

4. Ատրպետի երկերի ժողովածու.—I. և II. հատորները. Թաւրիզ. Թեմական Արագատիպ. 1904 թ. իւրաքանչիւր հատորի գինն է 1 ռուբլի:

5. Մկրտիչ Պեշիկթաշլեանի քերթուածները ու ճառերը.—Հրատարակութիւն Արշակ Չօպանեանի. Փարիզ. Տպարան «Անահիտ». գինն է 4 ֆրանք:

6. Կրօնի պատմութիւնը. Նախնական [հաւատալիքների նկարագիրը եւ կրօնական մեծ սիստեմների բնոյթը.—Թարգ. Ի. Քհ. Նազարեանի. Ալէքսանդրօպօլ, 1904. գինն է 1 ռ. 25 կոպ:

7. Լեզուի հարցը.—Ա. մաս.—Համուր հայեացք. Նոյն հեղինակի. Մոսկուա. 1904 թ. Տպարան Բ. Բարխուդարեանի. գինն է 40 կոպէկ:

8. Քրիստափոր Կարա-Մուրզա.—Հրատարակութիւն Գ. Մելիք-Կարագեօզեանի № 5 Յով. Կարապետեանի. Թիֆլիս, Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան. 1904 թ. գինն է 60 կոպէկ:

9. Հայկական տպագրութիւն.—Լէօ-ի II. տպագրութիւն. Հրատ. Համբ. Առաքելեանի (Հանրամատչելի գրադարան № 5). Տպարան «Հերմէս», Թիֆլիս. գինն է 1 ռ. 20 կոպ:

10. Ջիւանու քնարը.—Երկրորդ հատոր. Վաղարշապատ. Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի 1904 թ. գինն է 50 կոպ:

11. Ժամանակը ոսկի.—Թարգմ. Ս. Կամալեանի. Թիֆլիս Տպարան «Հերմէս» 1904 թ. գինն է 40 կոպ:

12. Դաւաճանութիւն.—Սուդերմանի. Թարգմ. Ջալալ Տէր Գրիգորեանի հրատ. Աղբիւր Տարազի № 65. Տպարան «Հերմէս» Թիֆլիզ 1904 թ. գինն է 50 կոպ:

13. Ռուդոլֆ Վիրխով.—Բժ. Բուդուղեանի. Հրատ. Յովհաննէս Արամեանցի № 9. Ս. Պետերբուրգ Պուշկինեան Արագատիպ. գինն է 25 կոպ:

14. Մաքսիմ Գորկի.—ա. և բ. գրքոյկներ. Զ. Զամքաղեանի. Թիֆլիս. Տպարան «Հերմէս». գինն ա. գրքի 10 կ. բ. 20 կոպ:

15. Մելքոն աղային սրօխան.—Նոր Նախիջևանի բարբառով. գրեց Յարութիւն Թումանեան. Բաքու Տպ. Ս. Անտօնեանի:

16. Փարոսի վրայ.—Սուրխաթեանի. փոխադրութիւն. գինն է 5 կոպէկ:

17. Անգլիայի քաղաքական եւ հասարակական կեանքը.—Հ. Առաքելեանի. Հանրամատչելի գրադարան № 6. գինն է 15 կ:

18. Կոյր Բաբին.—Թերթուած. Մ. Աւետիսեանի. գինն է 10 կ։

19. Սրբազան ժամեր.—Արտուրի. հրատ. Արշակ Մելիք Կարագեօզեանի. գինն է 20 կոպ։

20. Մի խոստովանութիւն.—Պօլ Բուրժէի. թարգ. Յ. Յարայ. գինն է 15 կոպէկ։

21. Ճշմարիտ մեկնութիւնը.—Էժանագին գրադարանի. հրատ. Տ. Զարէլի Ս. Պետերբուրգ Պուշկինեան տպարան. գինն է 7 կ։

22. Հայրենասէր Իտալացին.—Մաքս Նորդաու. Թարգ. Լ. Բարայեանի. Թէհրան 1904. արագատիպ «Փարոս». գինն է 10 շահի (10 կ.)։

23. Տարածուած ախտը.—Ա. Մ. Ծոցիկեանի Բագու. Տպարան «Արօր» 1904 թ. գինն է 3 կոպ։

24. Արտաւազդ.—Յարութիւն Թումանեանի. գինն է 30 կոպէկ։

25. Գերբնական հիւանդութիւն.—Արայի. գինն է 20 կոպէկ։

26. Մանուկների ստախօսութիւնը եւ նրա առաջն առնելու միջոցները.—Ա. Չիլինկարեանի. Ալէքսանդրապօլ. Տպարան Գ. Սանոյեանցի. 1903 թ. գինն է 15 կոպ։

27. Պատկերներ.—Ա. Դեմիրճեանի. Բագու. Տպարան Արօր. գինն է 10 կոպ.

28. Ղօնախլուղս մնաց.—Յովակիմ Սօլօմեանի. Թիֆլիս. Տպարան Ռօտինեանցի 1904. գինն է 20 կոպ։

29. Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը.—Ենովք Տէր Արիստակէսեանի. Մոսկուա, Տպարան Բ. Բարխուդարեանի. 1904 թ. գինն է 20 կոպ։

30. Մանկական գրադարան.—Ա. Չիլինկարեանի. ա. գիրք. գինն է 5 կոպ. բ. գիրք. գինն է 5 կոպէկ։

31. Համառօտ պատմութիւն հայոց եկեղեցու.—Պետ. միջն. դպր. հայ ուսանողների համար. Կազմեց Ներսէս քահանայ Ղամաղեանց Թիֆլիս. Արագատիպ Մ. Մարտիրոսեանի. գինն է 30 կոպէկ։

32. Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցու.—Գաբրիէլ աւագ քահանայ Տէր Գաբրիէլեանի. Թիֆլիս. Տպարան «Հերմէս» 1904 թ. գինն է 30 կ։

33. *Матеріалы для исторіи Грузино-Армянскихъ Отношеній.*—Отвѣтъ па книжку кн. И. Г. Чавчавадзе. Армянскіе ученые и Вопіющіе камни. Х. А. Вермишевъ. С. Петербургъ, Пушкинская Скоропечатня 1904 г. цѣна 1 рубль.

34. Կոլոնիական քաղաքականութիւնը անցեալում եւ ներկայում.—Կաուցկի. Թարգմ. Խանոյեանի. Թաւրիզ Թեմակ. Արագատիպ. 1904. գինն է 40 կոպ։

35. Համառօտ խրատներ խոլերայից պաշտպանուելու համար. — Գրեց դօքտոր Պ. Ադամեան. Հրատ. Թաւրիզի Հայոց Սանիտարական յանձնաժողովի. Թաւրիզ. Թեմակ. Արագատիպ:

36. Տեղեկագիր եւ Հաշուեցոյց Թաւրիզի Հայուհեաց բարեգործական միացեալ ընկերութեան. Ատրպատականի հայերի Թեմական արագատիպ. Վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբէկեանի յիշատակին. 1904 Թ. Թաւրիզ.

## ԵԼՔ ԵՒ ՄՈՒՏՔ

### Արդեանց եւ ծախուց Հոգաբարձութեան որբոց եւ այրեաց հոգեւորականաց Հայոց Ատրպատականի թեմի վասն անցեալ 1903 ամի:

*ՄՈՒՏՔ 1903 ամի.*

| | Ռուբ. | Կ. |
|---|---|---|
| 1. Առ 1 յունվարի 1903 ամի մնացեալ էին դրամատոմք 5,000 րուբ. և պատրաստի դրամք երեք հարիւր իննսուն րուբլի երեսուն և ինն կոպէկ (390 ր. 39 կ.) . . . . | 5990 | 39 |
| 2. Գանձադրամք, ժողովեալք ի հայադն ժողովրդոց Ատրպատականի և թեմի ընդամենն գումարաւ . | 347 | 88 |
| 3. Նուիրադրամք, ժողովեալք ի ժողովրդոց Ատրպատականի և թեմի ամենն գումարաւ . . | 238 | 96 |
| 4. Անդամավճար հասոյթք քահանայից Ատրպատականի և վիճակի, այլ և ի սպասաւորաց նոյն տեղեաց . . . . . . | 151 | » |
| 5. Տարեկան տոկոսիք դրամատոմակաց . . | 227 | 24 |
| 6. Հին դրամատոմք փոխեալք ի նոր . . | 1700 | » |
| 7. Ստացաւ ընդ հրամանագրութեան վիճ. կոնսիստ. ի 5 նոյեմբ. 1903 ամի, № 2260 վիճակ. տոմք օժանդակ գանձարանի և պատրաստի դրամս ամենն առ տումար . . . | 514 | 49 |
| 8. Տուգանադրամք և կողմնակի արդիւնք . . | 23 | » |
| 9. Ի պատճառս մահուան յետս ստացեալ անդամադրամ այրի երիցուհւոյ Եղիսաբէթի Դունեաջեանց . . . . . . . | 30 | » |
| 10. Արդիւնք ի մետրիքական արձանագրութեանց . | 89 | 50 |
| Գումար տարեկան մտից . | 3322 | 07 |
| Դրամատոմք . . | 5600 | « |
| Պատրաստի դրամք . | 390 | 39 |
| Ընդհանուր գումար . | 9312 | 46 |